

**ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՄԱՆ ԳԻՏԱԿԱՆ ՏԵՂԵԿԱԳԻՐ
УЧЕНЫЕ ЗАПИСКИ ЕРЕВАНСКОГО ГОСУДАРСТВЕННОГО УНИВЕРСИТЕТА**

Երկրաբանություն և աշխարհագրություն

1, 2014

Геология и география

Աշխարհագրություն

УДК 551.556.132

**ԱՐՓԱ ԳԵՏԻ ԱՎԱԶԱՆԻ ԷՔՍՏՐԵՄԱԼ
ՀՈՍՔԵՐԻ ՁԵՎԱՎՈՐՄԱՆ ԱՌԱՋԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ
ԵՎ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԴԻՆԱՄԻԿԱՆ**

Թ. Գ. ՎԱՐԴԱՆՅԱՆ*, Զ. Զ. ՄՈՒՐԱԴՅԱՆ

ԵՊՀ ֆիզիկական աշխարհագրության և ջրաօդերևութափանության ամբիոն, Հայաստան

Հողվածում դիտարկվում են Արփա գետի ավազանի գետերի էքստրեմալ հոսքերի ձևավորման առանձնահատկությունները, փոփոխության դինամիկան և ցիկլայնությունը: Արփա գետի ավազանի էքստրեմալ հոսքերի առաջացման կարևոր առանձնահատկությունն այն է, որ դրանց բնական և մարդածին գործոններն ունեն գրեթե նույն ազդեցությունը: Բացարձակ առավելագույն և բացարձակ նվազագույն հոսքերի դինամիկայում նկատվում է նվազաման միտում: Եթե առավելագույն հոսքերի դեպքում ոչիսկի գործոնը կտրուկ նվազել է, ապա նվազագույնի դեպքում այն աճել է, ինչն առավել խոցելի է դարձնում գետային էկոհամակարգերը:

Keywords: extreme runoffs, absolutely maximal runoff, anthropogenic factors, reduction tendency.

Խնդրի դրվածքը: Վերջին տասնամյակներին երկրագնդի վլա զգալիորեն աճել են բնական աղետները և դրանց պատճառած վնասները: Դրանց մեջ առանձնահատուկ տեղ են գրավում ջրային աղետները, մասնավորապես՝ այն աղետները, որոնք ձևավորվում են գետային ավազաններում: Դրանք խիստ վտանգավոր են, առանձնապես լեռնային շրջանների համար, որովհետև հենց գետահովիտներում են տեղաբաշխված բնակավայրերի հինգնական մասը:

Գետային հովիտներում որպես էքստրեմալ հոսքեր առանձնացնում են գետի ջրի բացարձակ առավելագույն և բացարձակ նվազագույն ծախսերը: Եթե բացարձակ առավելագույն ծախսերի, որոնք ձևավորում են ջրհեղեղները, ազդեցությունը և պատճառած վնասները՝ թե նյութական, թե մարդկային զոհերի առումով, կարող են տեղի ունենալ հաշված ժամերի, նույնիսկ րոպեների ընթացքում, ապա բացարձակ նվազագույնի դեպքում պատկերն այլ է: Այս դեպքում վտանգն անմիջապես չի երևում, ավելի մեղմ է, ավերածություններ և մարդկային զոհեր չեն լինում, սակայն երկարատև է և կարող է ծգվել անբողջ սեզոնի ընթացքում:

ՀՀ գետերում բացարձակ նվազագույն ծախսերը կարող են դիտվել ինչպես անառ-աշնանային, այնպես էլ ձմեռային սակավաջոր փուլերում [1]: Թե տնտեսական, թե էկոլոգիական առումով առավել վտանգավոր են ամառային սակավաջոր փուլում դիտված նվազագույն ծախսերը [2–4]: Պատճառն այն է, որ ամառային սակավաջոր փուլում մեծանում է ջրօգտագործման ծավալները ոռոգման և

* E-mail: tvardanian@ysu.am

ջրամատակարարման ոլորտներում, ուստի գետերից ջրառի ծավալները կտրուկ աճում են, որն էլ գետային էկոհամակարգը դարձնում է առավել խոցելի: Իսկ առանձին խիստ չորային տարիներին գետային հուները կարող են ժամանակավորապես ամբողջովին չորանալ, որն աղետալի հետևանքներ կարող է ունենալ:


Այսպիսով, գետերի ջրի բացարձակ առավելագույն և բացարձակ նվազագույն ծախսերը տնտեսական և էկոլոգիական առումներով ունեն բացառիկ կարևոր նշանակություն, ուստի խիստ արդիական է դրանց որոշումը և փոփոխությունների դինամիկայի գնահատումը:

Հետազոտության նյութը և մեթոդիկան: Աշխատանքի նպատակն է ուսումնամիել և գնահատել Արփայի ավազանի գետերի էքստրեմալ հոգքերի ձևավորման առանձնահատկությունները, փոփոխությունների դինամիկան և ցիկլայնությունը:

Աշխատանքների կատարման համար որպես եղակետային տվյալներ օգտագործվել են Հայպետիկդրոմետի արխիվացված պաշտոնական դիտարկումները, առանձին գերատեսչությունների տվյալները, ինչպես նաև կլիմայական և ջրաբանական ատլասները:

Հետազոտությունների և, ընդհանրապես, աշխատանքի նպատակի իրականացման համար կիրառվել են անալիզի և սինթեզի, մաթեմատիկական վիճակագրական, մոդելավորման, գենետիկական տեսական, աշխարհագրական ինտերպոլյացիայի և էքստրապոլյացիայի, ռեգրեսիայի և անալոգի, բինոմալ բաշխվածության և այլ մեթոդներ ու հնարքներ [3, 5–8]:

Արդյունքները և դրանց վերլուծությունը: Արփա գետը սկիզբ է առնում Սյունիքի բարձրավանդակի հյուսային մասից և Վարդենիսի լեռնավահանի հարավային լանջերից՝ մոտ 3050 մ բարձրությունից, և բափում է Արաքսի մեջ: Գետի երկարությունը 128 կմ է, որից համբաւետության տարածքում է 92 կմ² [9]: Արփայի համեմատաբար խոչը վտակներից են Ելեզիսը, Դարբը, Հերհերը, Վայքը, Գնիշիկը, Ելփինը, Եղեզիսը և այլն: Ջրատեխնիկական օրենսդրությունը կան 2 խոչը ջրամբարներ. Հերհերի (26 մլն մ³) Հերհեր գետի միջին հոսանքում և Կեչուտի (25 մլն մ³) Արփայի վերին հոսանքում (նկ. 1; աղյ. 1):



Նկ. 1: Արփայի ավազանի ջրագրական ցանցը:

Գետի աջափնյա ավազանի համար բնորոշ են ալիքավոր հրաբխային զանգվածները, որոնցից դեպքի հարավ ձգվող լավային լեզվակները հաճախ առաջանում են նեղ և երկար սարավանդներ՝ զարդարակ լանջեր ունեցող

Արփայի ավազանի իրենից ներկայացնում է լայն ու երկար գոգահովիտ՝ շրջապատված Վայքի, Զանգեզուրի լեռնաշղթաներով և Սյունիքի ու Վարդենիսի լեռնավահաններով: Այն բաց է միայն արևմտություն, որտեղ ելք ունի դեպի Միջնարաբյան գոգավորությունը:

Արփայի ավազանում ուղիենիքի բարձրությունների տարբերությունները բավական մեծ են՝ մոտ 2600 մ: Նրա ցածրադիր կետը՝ հովտում 920 մ է, իսկ ամենաբարձրը՝ Վարդենիսի լեռնագագարը (3520 մ), համանուն լեռնավահանի վրա: Այստեղ բնորոշ են ուղիենիքի մեծ ու խոր մասնատվածությունը, ինտեսիվ երողիան ու դենուդացիան և ակտիվ սելավները [10]:

առանձին փոքր լեռնաբազուկներով: Զախափնյայի համար բնորոշ են հին, ծալքավոր կառուցվածքի, զարդարական մասնատված, երթեմն սանդուղքած լանջերով լեռնաշղթաներ և մանր ու մեծ լեռնաբազուկներ [10]:

Ընդհանուր առնամբ գետի վերին հոսանքներում տարածվում են հրաբխային ապարներ, առավելապես բազալտ, անդեգիտաբազալտ, տոտֆ և ոչ մեծ քծերով գրանիտ, որոնք կանխում են էքստրեմալ ելքերի ձևավորմանը: Ստորին հոսանքներում՝ չորրորդականի փուլսը նստվածքներն են, որոնք նպաստում են էքստրեմալ ելքերի առաջացմանը:

Աղյուսակ 1

Արփայի ավազանի գետերի ջրագրական և ջրաբանական բնութագրիչները

Գետ – դիտակետ	հեռավորությունը գետաբերանից, մմ	Ջրհավաք ավազանի		Հոսքի բազմանյա միջին բնութագրիչները				
		նախնամար կմ ²	միջին բարձրությունը, մ	ծախսը, մ ³ /կ	հոսքի նորովը, լ/կ կմ ²	հոսքի շերտի բարձրությունը, մմ	առավելագույն հոսքը, մ ³ /կ	նվազագույն հոսքը, մ ³ /կ
Արփա–Զերմուկ	405	180	2790	5,3	29,4	929	49,9	1,8
Արփա–Եղեգմածոր	56	1220	2140	9,9	8,1	256	82,7	3,1
Արփա–Արենի	40	2040	2110	17,1	8,4	256	136,0	3,97
Էլեզիս–Շատին	10	458	2350	7,1	15,5	489	58,4	1,8
Սալիգստ–Շատին	0,6	144	2070	1,6	11,1	350	13,5	0,2


Էքստրեմալ ելքերի ձևավորման գործում բացառիկ կարևոր նշանակություն ունեն կլիմայական պայմանները: Քանի որ Արփայի ավազանում ֆիզիկա-աշխարհագրական բաղադրիչներն ընդհանուր առնամբ ենթակա են ուղղաձիգ գոտիականության, կլիման բնութագրելիս առանձնացվում է երեք գոտի [10]:

Առաջին գոտում (մինչև 1400 մ) կլիման ընդհանուր առնամբ չոր ու խիստ ցամաքային է, չափավոր ցուրտ ձմեռով և շող ամառով: Օդի միջին ջերմաստիճանների հունվարին մոտ $-4,4^{\circ}\text{C}$, օգոստոսին՝ $24,4^{\circ}\text{C}$: Բացարձակ ջերմաստիճանների տատանումները կարող են հասնել մինչև 69°C : Այս գոտում սառնամանիքները տևում են 4–5 ամիս՝ նոյեմբերի կեսերից մինչև ապրիլի կեսերը: Մթնոլորտային տերումների տարեկան քանակը չի գերազանցում $400–500$ մմ, այն էլ թափվում է զիմավորապես անձրևների տեսքով՝ առավելապես գարնանը: Երբեմն եկող ծյունն անմիջապես հալում է և նպաստում էքստրեմալ առավելագուն հոսքերի առաջացմանը՝ խանգարելով հաստատում ձևածածկույթի գոյացմանը:

Երկրորդ գոտում (1400–2800 մ) կլիման բարեխառն ցուրտ ցամաքային է, համեմատաբար խոնավ ամառով: Այս գոտում մթնոլորտային տեղումների տարեկան քանակը $600–700$ մմ է՝ առավելագույնը մայիսին: Զյան կայուն ծածկույթը մոտ $50–70$ մմ է: Գոյանում է դեկտեմբերի սկզբին, որը պահպանվում է մինչև ապրիլ ամիսը: Օդի միջին ջերմաստիճանը հունվարին $-8,1^{\circ}\text{C}$ է, հուլիսին՝ $15,1^{\circ}\text{C}$:

Երրորդ գոտում (2800 մ-ից բարձր) կլիման ցուրտ ցամաքային է, անսառնամանիք օրերի թիվը չի անցնում $50–70$ օրը: Հունվարի միջին ջերմաստիճանը -12°C է, բացարձակ, գրանցված նվազագույնը՝ -39°C : Ուժեղ են քամիները՝ $6–6,5$ մ/վ արագույթյամբ: Զնածածկը պահպանվում է մինչև հունիսի կեսերը: Գարունը աչքի է ընկնում չոր-ցուրտ եղանակներով, իսկ ամառը բարեխառն-տաք եղանակներով: Մթնոլորտային տեղումները այս գոտում բավական առատ են՝ $800–900$ մմ: Զյան ծածկույթը հասնում է մինչև $70–150$ մմ, որոշ տեղերում ուժեղ ձևաբերի հետևանքով մինչև $6–7$ մ:

Էքստրեմալ ելքերի փոփոխությունների դինամիկան ուսումնասիրելու համար ավազանի բոլոր դիտակետերի համար ընտրվել է նույն ժամանակամիջոցը՝ 1950–2010 թթ., որպեսզի դրանք համեմատելի լինեն: Այդ առումով Արփայի վտակների մեծ մասը չունենալով դիտարկումների երկար տարիների շարք, հաշվարկներում չեն օգտագործվել: Արփայի երեք դիտակետերի և ամենամեծ վտակ Ելեզիսի համար կառուցվել է բացարձակ առավելագույն և բացարձակ նվազագույն ծախսերի փոփոխությունների դինամիկան (նկ. 2):



Նկ. 2: Արփայի էքստրեմալ (բացարձակ առավելագույն և բացարձակ նվազագույն) ելքերի փոփոխությունների դինամիկան (1950–2010 թթ.):

● Արփա-Չերմուկ դիտակետ ■ Ելեզիս դիտակետ
▲ Արփա-Եղեգնաձոր դիտակետ ♦ Արփա-Արենի դիտակետ

Ինչպես երևում է գրաֆիկներից, Արփայի բոլոր դիտակետերում նկատվում է բացարձակ առավելագույն ծախսերի նվազման միտում, իսկ Ելեզիս վտակում այն գրեթե փոփոխության չի ենթարկվել: Մեր կարծիքով բացարձակ առավելագույն ծախսերի նվազման միտումը պայմանավորված է նրանով, որ այդ նույն ժամանակաշրջանում ՀՀ-ում օդի միջին տարեկան ջերմաստիճանը Կլիմայի փոփոխության միջկառավարական փորձագիտական խմբի կողմից ընդունված 1960–1990 թթ. ստանդարտ ժամանակաշրջանի միջինի հետ համեմատած վերջին 80 տարում աճել է $0,85^{\circ}\text{C}$ -ով [2], որի հետևանքով գետային ավազաններում տեղացած ձյունը երկար չի կուտակվում: Վաղ գարնանից այն աստիճանաբար սկսում է հալվել և գարնան վերջին արդեն նվազում կամ ամբողջովին վերանում է բացարձակ առավելագույն ծախսերի դիտման հավանականությունը:

Դիտումները ցույց են տալիս, որ այդ նույն ժամանակաշրջանում Չերմուկ դիտակետում նվազում են նաև 30-օրյա առավելագույն հոսքերը և նթնողրտային տեղումները [2, 11]: Բոլոր դիտակետերում նկատելի է բացարձակ առավելագույն ծախսերի փոփոխությունների ցիկլայնություն: Այն բաղկացած է հիմնականում փոքր ցիկլերից (4–5 տարվա կրկնությամբ), բացառությամբ Չերմուկի տեղամասից, որտեղ ցիկլերի տևողությունը բավականին երկար է և կազմում է 40–45 տարի:

Մեր կարծիքով վերջինս պայմանավորված է նրանով, որ Արփայի բարձրադիր մասերում, մասմավորապես՝ Զերմուկի տեղամասում, գետի հոսքն ավելի մոտ է բնականին և քիչ է ենթարկվել մարդու տնտեսական գործունեությանը: Իսկ գետի ստորի ավազանում աստիճանաբար ավելանում է մարդու տնտեսական գործունեությունը, հոսքը կարգավորվում է Կեչուտի և Հերհերի ջրամբարներով, ուստի առկա փոքր ցիկլերը բնական չեն:

Բացարձակ նվազագույն ծախսերի փոփոխությունների դիմամիկայի դեպքում պատկերը մի փոքր այլ է (նկ. 2): Ուսումնասիրված բոլոր դիտակետերում նկատվում է հոսքի կտրուկ նվազման ցայտուն արտահայտված դիմամիկա: Սիայն Զերմուկի տեղամասում այն աճում է: Խնչպես նշեցինք, այստեղ, գետի հոսքն ավելի մոտ է բնականին և քիչ է ենթարկվել մարդու տնտեսական գործունեությանը, որի հետևանքով ջրաների ծավալն ավելի քիչ է եղել: Մինչդեռ, գետի ստորին ավազաններում դրանց ծավալներն ավելի են աճում, որն էլ նպաստում է բացարձակ նվազագույն ծախսերի միտման գծերի սրբնաց նվազմանը:

Զերմուկ դիտակետի բացարձակ նվազագույն ծախսերի փոփոխությունների դիմամիկան համեմատվել է նույն ժամանակաշրջանի մքնոլորտային տեղումների և ամառ-աշնանային ու ձմեռային 30-օրյա նվազագույն ծախսերի հետ: Պարզվում է, որ վերջիններս, ի տարբերություն բացարձակ նվազագույն ծախսերի, ունեն աճի միտում, իսկ տեղումները՝ նվազման [2, 11]: Այստեղ նկատվում է որոշակի անհամապատասխանություն, որը լրացնից հետազոտության կարիք ունի:

Բացարձակ նվազագույն ծախսերի փոփոխությունների միտումում նույնապես դիտվում է պարզ արտահայտված ցիկլերի երկարությունը գրեթե կրկնակի նվազման է, իսկ Եղեգնաձոր դիտակետում՝ աճում: Մնացած բոլոր դիտակետերում նույն պատկերն է, ինչ-որ բացարձակ առավելագույնի դեպքում էր:

Եղբակացություն: Ամփոփելով աշխատանքը կարող ենք եղբակացնել, որ ընդհանուր առնամբ, Արփայի ավազանում էքստրեմալ հոսքերի ձևավորման կարևոր առանձնահատկությունն այն է, որ դրանց ձևավորման գործում գրեթե միանման ազդեցություն ունեն քեզ բնական, քեզ անթրոպոգեն գործունները:

Բացարձակ առավելագույն հոսքերի դիմամիկայում հիմնականում նկատվում է նվազման միտում, այսինքն՝ սպասվող ջրաբանական աղետների ոխվայնության աստիճանը կտրուկ աճում է, իսկ գետային էկոհամակարգերը դառնում են առավել խոցելի:

Բացարձակ նվազագույն ծախսերի փոփոխությունների դիմամիկայի դեպքում, բացառությամբ Զերմուկ դիտակետի, նույնպես նկատվում է նվազման միտում: Սակայն այս դեպքում ջրօգտագործման ծավալների ոխվայնության աստիճանը կտրուկ աճում է, իսկ գետային էկոհամակարգերը դառնում են առավել խոցելի:

Ուսումնասիրված բոլոր դիտակետերում նկատվում է բացարձակ առավելագույն և բացարձակ նվազագույն ծախսերի փոփոխությունների պարզ արտահայտված ցիկլացնություն: Ավազանի բարձրադիր մասերում ցիկլերը կարծ են (բացառությամբ Զերմուկի տեղամասից, որտեղ ցիկլերի տևողությունը բավականին երկար է և հասնում է մինչև 40–45 տարի) և մոտ են բնականին, իսկ ցածրադիր ավազաններում դրանք կարգավորված են մարդու կողմից:

Ստացվել է՝ 22.01.2014

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. **Վարդանյան Թ.Գ.** Հայաստանի Հանրապետության գետերի նվազագույն հոսքը և հաշվարկը: Աստմախոսություն աշխ. գիտ. թեկնածուի գիտական աստիճան հայցելու համար: Եր., 1995, 260 էջ:

2. **Варданян Т.Г.** Колебания стока рек Армении и его прогноз при глобальном изменении климата: Автoref. дисс. на соискание уч. степ. докт. географ. наук. Ер., 2013, 266 с.
3. **Алексеевский Н.И., Фролова Н.Л., Агафонова С.А.** Методы предупреждения социально-экономического ущерба в период половодья на реках России. // Природообустройство, 2011, № 3, с. 47–53.
4. **Vardanian T.G.** On the Ecological Monitoring of Pollution of Waters Resources in Armenia. Articles of the I International Conference on Ecology and Environmental Management in Caucasus. Tbilisi, Georgia, 2001, p. 95–98.
5. Атлас природных и техногенных опасностей и рисков чрезвычайных ситуаций Российской Федерации. М.: Дизайн. Информация. Картография, 2010, 696 с.
6. Экстремальные гидрологические ситуации (под ред. Н.И. Короневич, Е.А. Барабанова, И.С. Зайцева). М.: Медиа-ПРЕСС, 2010, 464 с.
7. **Гнеденко Б.В.** Курс теории вероятностей. М., 2007, 42 с.
8. **Рождественский А.В., Чеботарев А.И.** Статистические методы в гидрологии. Л., 1974, 424 с.
9. Հայկական ՍՍՀ ջրագրությունը: Եր., ՀՍՍՀ ԳԱ հրատ., 1981, 177 էջ:
10. Հայկական ՍՍՀ ֆիզիկական աշխարհագրություն: Եր., ՀՍՍՀ ԳԱ հրատ., 1971, 470 էջ:
11. **Варданян Т.Г.** Сток рек Армении и оценка его изменения при глобальном потеплении климата. Ер.: Изд-во ЕГУ, 2006, 178 с.

Т. Г. ВАРДАНЯН, З. З. МУРАДЯН

ОСОБЕННОСТИ ФОРМИРОВАНИЯ И ДИНАМИКА ИЗМЕНЕНИЙ ЭКСТРЕМАЛЬНЫХ СТОКОВ В БАССЕЙНЕ РЕКИ АРПА

Резюме

В статье рассматриваются особенности формирования, динамика изменений и цикличность экстремальных стоков рек бассейна р. Арпа. Выявлено, что на формирование последних и природные, и антропогенные факторы имеют почти одинаковое влияние. В динамике абсолютно максимальных и абсолютно минимальных стоков в основном наблюдается тенденция к уменьшению. Если в случае максимального стока степень риска резко уменьшилась, то в случае минимального стока она возросла, что превращает речные экосистемы в наиболее уязвимые.

T. G. VARDANIAN, Z. Z. MURADYAN

PECULIARITIES OF EXTREME RUNOFFS FORMATION AND CHANGES DYNAMICS IN ARPA RIVER BASIN

Summary

Peculiarities of extreme runoffs formation, changes dynamics and recurrence of rivers in the Arpa River basin are discussed. The main peculiarity of formation of extreme runoffs is that both natural and anthropogenic factors have almost identical influence. In dynamics of absolutely maximal and absolutely minimal runoffs, generally reduction tendency is observed. If in case of maximal runoffs the risk degree has sharply decreased, then in case of minimal runoffs it has increased that makes river ecosystems most vulnerable.